ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. N ----- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 34-35-րդ, 42-րդ և 67-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ.693-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 4,034,845,800,0 (չորս միլիարդ երեսունչորս միլիոն ութ հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր) դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 4,034,840,000.0 (չորս միլիարդ երեսունչորս միլիոն ութ հարյուր քառասուն հազար) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 403,484 (չորս հարյուր երեք հազար չորս հարյուր ութսունչորս) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 9,188,380,000 (ինը միլիարդ հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) դրամ, որը կազմում է 918,838 (ինը հարյուր տասնութ հազար ութ հարյուր երեսունութ) հատ 10.000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված

Կազմված է ----------2024թ.
և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Հայաստանի Հանրապետության
Երևան քաղաքի ավագանու
« » 2024թ.
N --- -Ա որոշմամբ

ՀՀ Երևանի քաղաքապետ՝

_____ Տ. ԱՎԻՆՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 15.12.2011 թ.,
գրանցման N282.120.56025

վկայական N03 Ա 206025

հվհհ 00875439

15.12.2011թ. գրանցված կանոնադրության
թիվ ____.___ փոփոխությունը գրանցված
է ՀՀ արդարադատության
նախարարության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

_____

“____”_____ 2024 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

2024թ.

Ընկերության կանոնադրության 4.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 9,188,380,000 (ինը միլիարդ հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) դրամ, որը կազմում է 918,838 (ինը հարյուր տասնութ հազար ութ հարյուր երեսունութ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10,000 (տասը հազար) դրամ:

Բոլոր 918,838 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության՝ 15.12.2011թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, այն է՝ Երևանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատում է Երևանի ավագանին:

Երևանի քաղաքի ավագանու՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ.693-Ն և Երևանի քաղաքապետի՝ 2023 թվականի հունվարի 20-ի հ.170-Ա որոշումներով հաստատվել է Երևան քաղաքի 2023թ. բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին հատկացվելիք գումարի չափը՝ 4,035,870,000.0 (չորս միլիարդ երեսունհինգ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) դրամ, որի դիմաց՝ որպես կանոնադրական կապիտալի ներդրում, փաստացի հատկացվել է 4,034,845,800.0 (չորս միլիարդ երեսունչորս միլիոն ութ հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր) դրամ:

Նշված գումարի սահմաններում տեղաբաշխվել է լրացուցիչ 403,484 (չորս հարյուր երեք հազար չորս հարյուր ութսունչորս) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով, ինչի արդյունքում կանոնադրական կապիտալն ավելանում է 4,034,840,000.0 (չորս միլիարդ երեսունչորս միլիոն ութ հարյուր քառասուն հազար):

Հատկացված գումարի չափով կանոնադրական կապիտալի ավելացումը բխում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 42-րդ հոդվածի պահանջներից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ